



**MILLENNIUM CHALLENGE
ACCOUNT - ARMENIA**
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 22, 2009

Ստորագրվել է Չորս ինքնահոս համակարգերի կառուցման պայմանագիրը

Երևան, Հայաստան- 2009 թ. սեպտեմբերի 22-ին Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ (ՀՄՀ-Հայաստան) ՊՈԱԿ-ը և «Արփա Սևան» ԲԲԸ-ն (Հայաստան) կնքեցին չորս ինքնահոս համակարգերի /Այգեգարդ, Շենիկ, Մանթաշ և Վարդենիս / շինարարության պայմանագիր: Պայմանագիրը կնքվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանի և «Արփա Սևան»-ի տնօրեն Պարույր Հակոբյանի կողմից:

Պայմանագրի ստորագրմանը ներկա է գտնվել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, ով նաև հանդիսանում է ՀՄՀ- Հայաստանի Կառավարման խորհրդի անդամ:

Պայմանագրի գինը կազմում է 5, 512, 827.12 ԱՄՆ դոլար, իսկ պայմանագրի ժամկետն է 20 ամիս:

Կառուցված ինքնահոս համակարգերից կօգտվեն Արարատ, Արմավիր, Շիրակ և Գեղարքունիք մարզերի 23 համայնքների ավելի քան 60, 000 գյուղացի:

Չորս ինքնահոս համակարգերի շինարարությունն իրենից ներկայացնում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգման ենթակառուցվածք ենթածրագրի շրջանակներում իրականացվող ենթակառուցվածքային կարևորագույն բաղադրիչներից մեկը ի թիվս 6 մայր ջրանցքների և 17 պոմպակայանների վերականգման, ինչպես նաև ավելի քան 70 շահառու համայնքներում ներտնտեսային ցանցի և Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի բարելավումների:

Այս իրադարձության և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել

www.mca.am

Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն է, որն հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ ժողովրդավարության և արդարության սկզբունքներով իրականացնելու Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված համաձայնագիրը: